

## **ՀՀ վարչապետի «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխություն**

05.04.2013 թ.

ՀՀ վարչապետի «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությունը Հայաստանում անցկացվում է երկրորդ անգամ: Այն կազմակերպում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Մրցանակաբաշխության համար հայտարարված մրցույթի արդյունքներն ամփոփվել է մրցույթային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկվել են շահագրգիռ գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Արդար գնահատում իրականացնելու նպատակով ուսումնասիրվել է հանրապետության բոլոր 914 /բացառությամբ Երևան քաղաքի/ համայնքների ՏԻՄ մարմիններում, համայնքի ղեկավարի աշխատակազմերում և համայնքային ենթակայության կազմակերպություններում տիրող գենդերային իրավիճակը, ինչպես նաև այդ ուղղությամբ իրականացված ծրագրերը:

Արդյունքում հանձնաժողովը որոշել է.

**1.ա) «Քաղաքային համայնքի ավագանու գենդերային կազմը, ավագանու կազմում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը 2008 և 2012 թվականներին» անվանակարգում Հանձնաժողովը որոշեց համայնքի ավագանու կազմում կանանց և տղամարդկանց հարաբերակցություն ցուցանիշով հաղթող ճանաչել**

1-ին տեղում՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան քաղաքային համայնքի ղեկավար - Լևոն Զավարյան,

2-րդ տեղում՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքային համայնքի ղեկավար - Արթուր Հարությունյան,

3-րդ տեղում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքի ղեկավար - Գուրգեն Մարտիրոսյան:

**բ/ «Գյուղական համայնքների ավագանու գենդերային կազմը, ավագանու կազմում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը 2008 և 2012 թվականներին» անվանակարգում Հանձնաժողովը որոշեց համայնքի ավագանու կազմում կանանց և տղամարդկանց հարաբերակցություն ցուցանիշով հաղթող ճանաչել՝**

1-ին տեղում՝ ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանք գյուղական համայնքի ղեկավար - Արա Սուքիասյան,

2-րդ տեղում՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղական համայնքի  
ղեկավար - Մելսիկ Ղազարյան,

3-րդ տեղում՝ ՀՀ Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավար -  
Դավիթ Առուստամյան:

**2. ա/ «Քաղաքապետարանի աշխատակազմի գենդերային կազմը, կանանց և տղամարդկանց թիվը ծառայողների բոլոր կարգերում, գենդերային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում» անվանակարգում հաղթող ճանաչել**

1-ին տեղում՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքային համայնքի  
ղեկավար - Արթուր Հարությունյան,

2-րդ տեղում՝ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճրն քաղաքային համայնքի  
ղեկավար - Գագիկ Մաթևոսյան,

3-րդ տեղում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքային  
համայնքի ղեկավար - Բագրատ Հարությունյան:

**բ/ «Գյուղապետարանի աշխատակազմի գենդերային կազմը, կանանց և տղամարդկանց թիվը ծառայողների բոլոր կարգերում, գենդերային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում» անվանակարգում հաղթող ճանաչել**

1-ին տեղում՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղական համայնքի  
ղեկավար - Արծրուն Իգիթյան,

2-րդ տեղում՝ ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղական համայնքի  
ղեկավար - Կամո Կակոյան,

3-րդ տեղում՝ ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար գյուղական համայնքի  
ղեկավար - Շահեն Շահինյան:

**3.ա/ «Քաղաքի հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների և տեղակալների գենդերային կազմը, գենդերային ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում» անվանակարգում հաղթող ճանաչել**

1-ին տեղում՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքային համայնքի  
ղեկավար - Հակոբ Շահգալոյան,

2-րդ տեղում՝ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքային համայնքի  
ղեկավար - Կարեն Գրիգորյան,

3-րդ տեղում՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքային համայնքի  
ղեկավար - Ռուբեն Խլիլյան

**բ/ «Գյուղական համայնքներում հիմնարկների և կազմակերպությունների  
ղեկավարների և տեղակալների գենդերային կազմը, գենդերային  
ներկայացվածության փոփոխությունները վերջին 2 տարվա ընթացքում»  
անվանակարգում հաղթող ճանաչել՝**

1-ին տեղում՝ ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտի գյուղական համայնքի ղեկավար -  
Ժորա Մարտիրոսյան,

2-րդ տեղում՝ ՀՀ Կոտայքի մարզի Բջնի գյուղական համայնքի ղեկավար - Արմեն  
Մաթևոսյան,

3-րդ տեղում՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիա գյուղական համայնքի ղեկավար - Աղասի  
Ամիրյան: